# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.09.2018թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ՍՑ-ԱՄ-2018/128**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15423-18 գրությամբ «Ավտոդաս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 24.08.2018թ. թիվ 01/355-18 գրության հիման վրա, 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15423-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Ավտոդաս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

## 2. «Ավտոդաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Ավտոդաս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «Ավտոդաս» ՍՊԸ-ն գործում է 2003թ., իրականացնելով ավտոտեխ. սպասարկման ոլորտում լայնապրոֆիլ ծառայություններ: Ընկերությունը պարբերաբար իրականացնում է մասնագետների վերաորակավորում և համալրումներ՝ համապատասխան ուսումնական հաստատություններից:

Որոշակի բիզնես-խոչընդոտներ հաղթահարելու նպատակով 2017 թվականին «Ավտոդաս» ՍՊԸ-ն փոխառու միջոցներ է ներգրավել և այդ միջոցները ուղղել աշխատողների աշխատավարձի և այլ ընթացիկ խնդիրների լուծմանը:

Ընկերությունը իրականացնելով բիզնեսի առողջացում, հաղթահարել է բոլոր խոչընդոտները և այսօր արդեն 2017թ. համեմատ մոտ 50% ավելացրել է աշխատող մասնագետների քանակը՝ հասցնելով այն 48-ի: Ընկերությունը ոչ հարկային, ոչ էլ գործընկերների նկատմամբ չունի ժամկետանց պարտավորություններ: Ընկերությունը մշտապես բարեխիղճ և պատշաճ կերպով իրականացնում է իր ստանձնած պարտավորությունները, դրա մասին են վկայում գործընկերների կողմից տրված համապատասխան տեղեկանքները:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է, հաշվի առնելով, որ «Ավտոդաս» ՍՊԸ-ն առաջին անգամ է նման խնդրի առաջ կանգնել, Ընկերությանն չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/128 ընթացակարգի շրջանակներում 31.08.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր նշել են, որ ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ հայտնաբերելուց հետո գնահատող հանձնաժողովն Ընկերությանը չի ծանուցել և հնարավորություն չի տվել շտկել առկա անհամապատասխանությունները:

**3. <u>«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 24.08.2018թ. թիվ 01/355-18 գրությամբ հայտնել է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայության ձեռքբերման նպատակով «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/30» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Ավտոդաս» ՍՊԸ-ի պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը բարձր է ակտիվների հաշվեկշռային արժեքից համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրամադրված եզրակացության:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/128 ընթացակարգի շրջանակներում 31.08.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**<u>4. ՍՑ-ԱՄ-2018/128 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2018/128 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայության ձեռքբերման համար հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավտոդաս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 6.1 կետի համաձայն՝ «Ավտոդաս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 08.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ավտոդաս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 75 787 542 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 121 206 440 ՀՀ դրամ:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Ավտոդաս» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակտիվների արժեքը:

**5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15423-18 գրությունը, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 24.08.2018թ. թիվ 01/355-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական

եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: ***<u>Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:</u>***

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5

աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով արձանագրված անհամապատասխանությունը կարող է շտկվել ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Նույն կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 63-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցը, բացառությամբ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի, հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայության ձեռքբերման համար հայտարարվել է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ավտոդաս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/30» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.07.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 6.1 կետի համաձայն՝ «Ավտոդաս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Ավտոդաս» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-

րդ կետի հիման վրա 08.08.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ավտոդաս» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու տարվան նախորդող տարվա ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում է 75 787 542 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 121 206 440 ՀՀ դրամ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2-րդ կետով արձանագրվել է, որ «Ավտոդաս» ՍՊԸ-ի պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը բարձր է ակտիվների արժեքից, ուստի ղեկավարվելով Կարգի 44-րդ կետով, որոշվել է Ընկերության հայտը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչել անբավարար և մերժել:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ որոշվել է ծանուցել «Ավտոդաս» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոհիշյալ անհամապատասխանությունը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 05.09.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/16059-18 գրությամբ դիմել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին խնդրելով տրամադրել «Ավտոդաս» ՍՊԸ-ին Կարգի 47-րդ կետի հիման վրա ուղարկված ծանուցումը, ինչպես նաև ծանուցումն Ընկերությանն ուղարկելու ամսաթիվը պարունակող փաստաթուղթը:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն 12.09.2018թ. թիվ 1-03/1101 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի շրջանակներում «Ավտոդաս» ՍՊԸ-ին հեռախոսակապի միջոցով տեղեկացվել է առկա նահմապատասխանության վերաբերյալ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի 24.08.2018թ. թիվ 01/355-18 գրությունը և կից փաստաթղթերը, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.08.2017թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրությունը, ինչպես նաև հաշվի առնելով Պատվիրատուի 12.09.2018թ. թիվ 1-03/1101 գրությունը, արձանագրում եմ, որ «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Ավտոդաս» ՍՊԸ-ի

«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքների մասով անհամապատասխանություն արձանագրվելուց հետո Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով չի ծանուցվել Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունը մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկելու անհրաժեշտության վերաբերյալ, այլ գնահատող հանձնաժողովը միանգամից մերժել է Ընկերության հայտը: Մինչդեռ Կարգի 44-րդ կետը սահմանում է, որ ***նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից չի կիրառվել Կարգի 47-րդ կետը, և «Ավտոդաս» ՍՊԸ-ին չի տրվել «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշում արձանագրված անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն, ուստի գտնում եմ, որ «Ավտոդաս» ՍՊԸ-ի կողմից «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/30» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չեն խախտվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.08.2018թ. թիվ 01.1/26-3/15423-18 գրությամբ «Ավտոդաս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01807072) գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**Գնումների հետ կապված**
**բողոքներ քննող անձ՝** ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ